

ՄԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆ – ՍԱՐԳԻՍ ՍՐԱՎՊԻՈՆԵԱՆ – ԼՈՒԿԱՇԻՆ ԳԱՂՏՆԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ*

Բանալի բառեր – Միմոն Վրացեան, Սարգիս Սրապիոնեան-Լուկաշին, Համազգայինի գրական արխիւ, ստալիներան վարչաձև, Մարտիրոս Սարեան, Ամենայն հայոց կառավարութիւն, Վիսրադէն:

1963ին Պէյրութ լոյս տեսած «Կեանքի ուղիներով»ի Գ. հատորի վերջին գլուխը Միմոն Վրացեան յատկացուցած է Սարգիս Սրապիոնեան-Լուկաշինի (էջ 260-275): Վրացեան և Լուկաշին նոր նախիջևանցի էին, իրարու ազգական, գրեթէ տարեկից և դպրոցական ու պատանեկան տարիներու մտերիմ ընկերներ, որոնց հասարակական կեանքը այնուհետև պիտի ստանար տարբեր, չըսելու համար հակադիր ուղղութիւն: Առաջինը դաշնակցական, երկրորդը՝ նախ սոցիալ դեմոկրատ (սպեցիֆիկ), ապա համայնավար: Այսուհանդերձ Վրացեան մեծ համարում ունի իր երբեմնի ընկերոջ և համերկրացիին նկատմամբ իբրև մարդու և հասարակական հայ գործիչի: Կարելի է ըսել նոյնիսկ, որ իրեն՝ Վրացեանի համար անսովոր կերպով՝ գովասանք ու գնահատական կը շոյայտի Լուկաշինի հասցէին:

Մատնանշուած գործին մէջ Վրացեան, առանց վայրի ու թուականի յիշատակութեան, այսպէս կ'անդրադառնայ Սրապիոնեան-Լուկաշինի հետ իրենց վերջին հանդիպումին արտասահմանի մէջ.

«Մէկ անգամ էլ – վերջին անգամ – Սարգսի հետ մենք տեսուեցինք տարիներ վերջ: Այս անգամ նա հայրենիքի տէր, իշխանաւոր, օրուայ մարդ էր, ես հայրենագուրկ, տարագիր, նախկին մարդ էի: Իմ վիշտն ու հոգեկան տառապանքը բնական էին: Բայց ակնյայտնի կերպով վիշտ ու տառապանք էին կարդացուում նաև նրա աչքերում: Ես պարտուած էի, նա՝ յաղթական, սակայն, յաղթողի տեսք չունէր նրա կեցուածքը: Դէմքը երկարել, նիհարել, օտարոտի ձև էր ստացել: Աչքերի նախկին փայլը կարծես մարել էր: Կարծես կորել էր և նրա այնքան շեշտուած ինքնավստահութիւնը:

–Սարգիս, ի՞նչ է պատահել,– հարցրի ես յուզումով: Դու փոխուել ես:

Ոչինչ, կը խօսենք, կ'իմանաս...

Եւ մենք խօսեցինք: Ամբողջ գիշեր, մինչև լոյս: Ահ, եթէ ես կարողանայի հրապարակել մեր այդ գիշերուայ խօսակցութիւնը... Եթէ կա-

*Ընդունուել է տպագրութեան 20.05.2017:

րողանայի և եթէ ինձ հաւատային...

Այնուհետև ես Սարգսի հետ չհանդիպեցի այս աշխարհում: Բայց կարծում եմ, որ միւս աշխարհում կը հանդիպենք, այլևս ոչ իբրև հա- կառակորդներ, այլ որպէս գաղափարակիցներ...»¹:

Այս էջատակի ծանօթագրութեամբ կ'աւելցնէ.

«Մեր վերջին տեսակցութիւնը տեղի ունեցաւ Սարգսի նախաձեռ- նութեամբ Սովետ. Միութեան սահմաններից դուրս: Ներկայ պայման- ներում անկարելի է այդ մասին խօսել: Ես գրի եմ առել այդ տեսակ- ցութիւնը «պատմութեան համար»² :

Լուկաշինի հետ իր ունեցած այս տեսակցութեան մասին այլ յիշատա- կութեան մը կը հանդիպինք Վրացեանի ձեռագիրներուն մէջ: 1943 թ. «Օրա- գրութեան» մէջ, որ ըստ էութեան այդ օրերու հայկական հարցի մասին ընդարձակ և շահեկան վերլուծութիւն մըն է, Վրացեան կ'ակնարկէ այդ հանդիպման, դարձեալ առանց թուականի նշումի, բայց յայտնելով վայրը՝ «Ֆրանս-գերմանական սահմանին վրայ», որ իրօք Վիսբադէն քաղաքն է: Այս հանդիպման ընթացքին է, որ Լուկաշին կը յայտարարէ. «Խելքդ վրադ պահիր, այն ինչ որ դուք չյաջողեցիք անել, մենք պիտի անենք. մենք պիտի գրաւենք Թրքահայաստանը, պիտի միացնենք Խորհրդ. Հայաստանին և պիտի դառնանք Կովկասում ամենամեծ և զօրաւոր երկիրը»³:

* * *

Վրացեանի յիշատակած «ես գրի եմ առել այդ տեսակցութիւնը «պատ- մութեան համար»-ը շարժած էր շատերուս հետաքրքրութիւնը, մանաւանդ որ հեղինակը իր ողջութեան յարմար չէր գտած անոր հրապարակումը: Պատմական այդ փաստաթուղթը երևան հանելու համար պէտք եղաւ վերջերս մաղէ անցընել Վրացեանի գրական հսկայածաւալ թողօնը, թէ՛ իր անձնական թուղթերուն և թէ՛ Համազգայինի գրական կոչուած արխիւ- ներուն մէջ, որոնք կը պարունակեն պետական և հասարակական բազմա- վաստակ գործիչին հեղինակային և այլ փաստաթուղթերը՝ անցեալ դարու առաջին տարիներէն մինչև իր մահը (1969): Մեր փնտռտուքներուն վերջ- նական եզրակացութիւնը եղաւ այն, որ այդ գրառման «թերթերը կորել են», ինչպէս հեղինակը ինք կը գրէ տեղ մը:

Բարեբախտաբար մեր պրպտումները տուին նաև որոշ արդիւնք:

1 Վրացեան Սիմոն, Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ, Գ. հատոր, Պէյրութ, տպա- րան «Մշակ», 1963, էջ 272:

2 Նոյն տեղում:

3 Խորհրդային Հայաստանի ղեկավարությունից դուրս մղվելուց հետո, 1925-1928 թթ. Ս. Սրային- յանը Թբիլիսիում էր և գբաղեցնում էր Անդրդաշնության ԺԿԽ նախագահի տեղակալի պաշտոնը: 1928-ից փոխադրվում է Մոսկվա: Մի շարք պաշտոններ գբաղեցնելուց հետո 1931 թ. մարտին նշա- նակվում է ԽՍՀՄ Ժողտնտխորհի շինարարական և շինանյութերի արդյունաբերության համամիու- թենական միավորման (Սոյուզստրոյի) նախագահի առաջին տեղակալ, իսկ այնուհետև՝ նախագահ: 1931 թ. հուլիսի 31-ին Սոյուզստրոյի վարչությունը քննարկելով արտասահմանից տեխնիկական օգնության հարցը և նկատի ունենալով, որ ԽՍՀՄ-ն այդ ասպարեզում Գերմանիայի տեխնիկական և տեխնոլոգիական օգնության կարիքն ունի՝ Գերմանիա է գործուղել Ս. Լուկաշինին, որտեղ էլ թերևս հանդիպել է Ս. Վրացյանի հետ: Բայց հնարավոր է, որ նման գործուղումներ եղել են նաև հաջորդ տարիներին, քանի որ խորհրդա-գերմանական տնտեսական գործակցությունը բավականին աշխույժ էր: ԽՎԲ: Ավելի մանրամասն տես Կարապետյան Հ., Մեծ պայքարի մարդիկ, գիրք 2, Եր. 1967, էջ 174 և 186:

Գտանք երկու տարբեր թղթածրարներու մէջ (**Ս. Վրացեանի անձնական արխիւ՝ ՍՎ 176/18 և Համազգայինի գրական արխիւ, Պահարան III, գգրոց Բ.**) թուով երեք գրառումներ մատնանշուած հանդիպումին մասին: Անոնք որոշ գաղափար մը կու տան անշուշտ Վրացեան-Լուկաշին գրոյցի մտերմիկ բնատրոյթեան մասին, բայց հեռու են ամբողջական ըլլալէ, երբ մանաւանդ նկատի ունենանք «Կեանքի ուղիներով»ի և 1943 թ. Վրացեանի «Քաղաքական օրագրութեան» մէջ բերուած կարգ մը վերոյիշումներ, որոնք կը պակսին մեզի հասած այս թերի գրառումներուն մէջ: Այսուհանդերձ, հրատարակութեան տալով այդ պատառիկները, կը կարծենք որ անոնք կրնան կարևոր նիւթ հայթայթել ապագայ պատմաբանին՝ որոշ պատկերացում կազմելու 1930ական թուականներու երկու հեղինակաւոր անձնատրոյթեանց՝ բոլշևիկ Լուկաշինի և դաշնակցական Վրացեանի գէթ անձնական յարաբերութիւններու բնոյթին մասին:

Այժմ երևան հանուած երեք պատառիկներուն մասին, որոնց տուած ենք պայմանական Ա. Բ. և Գ. տառերը:

Ա.ը մէկ էջ ձեռագիր է, բաւական խնամքով գրուած «Վէմ»ի պաշտօնաթուղթին վրայ: «Վէմ» երկամսեայի առաջին թիւը լոյս տեսաւ 1933 թ. Սեպտ.-Նոյեմբերին Վրացեանի խմբագրութեամբ:

Այս մէկ թերթէն յայտնի կը դառնայ նաև որ ան կը կազմէ առաջին էջը այն ամբողջական գրառման, որուն մասին կը խօսի հեղինակը: Անոր շարունակութեան կորուստին մասին կը վկայէ դարձեալ ինք՝ Վրացեան:

Բ. պատառիկին սկիզբը արդարև գրուած է «թերթերը կորել են»: Այս պատառիկը կը բաղկանայ երկու մեծադիր էջերէ՝ կցուած Ա.-ին, և յայտնաբար աւելցուած տասնամեակներ ետք, վերոյիշումի ճամբով ամբողջութիւնը վերակազմելու յուսահատական ճիգով մը: Յուսահատական՝ ոչ միայն անոր համար որ այս էջերն ալ անաւարտ են, այլ նաև որովհետև գրի առնուած են դողդոջուն ձեռքով. բառեր, յաճախ նաև՝ ամբողջական տողեր, վրայ-վրայի դրուած կամ խաչաձև՝ կը դժուարացնեն ձեռագրին ընթերցումը: Ապա նաև էջերուն վրայ անմէլան գրչի հետքեր...: Հետևաբար այս բաժինները հրատարակութեան կը յանձնուին շատ մը բացերով (կիտաւոր) և հարցականներով:

Գ. պատառիկը, որ պահ մը մեր վրայ թողուց այնքան փնտռուած ամբողջական գրառումը գտած ըլլալու տպաւորութիւնը, կազմուած է 9 փոքրադիր էջերէ, նոյնպէս դողդոջուն գրչով, ինչպէս Բ.ը:

Ինչպէս ըսուեցաւ, Բ. և Գ. գրառումները տեղի ունեցած են «տեսակցութենէն» տասնամեակներ ետք, երբ Ս. Վրացեանի տեսողութիւնը կ'ենթարկուէր յաճախակի տկարացումներու:

Ուշ գրուած ըլլալու մասին կը վկայէ «Կեանքի ուղիներով» Գ. հատորի ակնարկութիւնը՝ «բոլշևիկեան, այն ժամանակ ստալինեան վարչաձևի մասին» խօսքը, ինչ որ ենթադրել կու տայ որ Ստալին չկայ այլևս: Ըջգրիտ թուականը, կամ մօտաւորապէս, երևան բերելու համար կը կարծենք որ մեկնակէտ կրնայ ծառայել «Կեանքի ուղիներով» Գ. հատորի հրատարակութեան տարին՝ 1963 թ.: Արդարև այդ օրերուն Վրացեանի տեսողութիւնը լրջօրէն վատթարացած ըլլալով, 1962 թ. վերջին ամիսներուն ան ստիպուեցաւ մեկնիլ Պէյրութէն (ուր Համազգայինի Ն. Փալանճեան ձեռնարանի

տնօրէնի պաշտօնը կը վարէր) դէպի Միացեալ Նահանգներ, ուր նոյն տարուան Նոյեմբերին ենթարկուեցաւ աչքերու վիրաբուժական գործողութեան: Մինչ այդ տպագրութեան յանձնած էր արդէն յուշագրութեան Գ. հատորը, ուր կ'ըսէ թէ «ներկայ պայմաններում անկարելի է այդ մասին խօսիլ»: Տրամաբանական պիտի ըլլար, հետևաբար, Լուկաշինի հետ խնդրոյ առարկայ տեսակցութեան գրառման թուականը զետեղել 1962 թ. ամառ-աշուն ամիսներուն:

Կը մնայ ձգգրտել Վրացեան-Լուկաշին հանդիպման թուականը, որուն համար մեր պրպտումներու ընթացքին ոչ մէկ յիշատակութիւն գտանք: Առ այժմ միակ յենարան ունինք տեսակցութեան ընթացքին Լուկաշինի այն խօսքը, թէ «ձեր մամուլի, մանաւանդ «Դրօշակ»ի սուր քննադատութիւնները զէնք ծառայեցին մեր ձեռքում և մենք ունեցանք շաքարի սեփական գործարան»: Արդարև, քննադատական այդ յօդուածը, Զանգի ծածկանունով (Յակոբեան Մնացական) և «Հայաստանի տնտեսական խնդիրները» խորագրով, լոյս տեսած էր «Դրօշակ»ի 1932 թ. Օգոստոսի համարով⁴: Խմբագրական ծանօթագրութիւնը (Վրացեանն էր այդ տարիներու «Դրօշակ»ի խմբագիրը) կը յայտնէ, որ «յօդուածի հեղինակը Խորհրդ. միութեան սահմաններից նոր դուրս եկած մի ինժեներ է, որ երկար տարիներ աշխատել է Անդրկովկասում և մօտից ծանօթ է խորհրդային տնտեսական պայմաններին և կոմունիստական կարգերին ու բարբերին: Նրա հաղորդած փաստերը արժէքաւոր են հէնց նրանով, որ նա ականատես կամ ականջալուր է եղել իր գրածներին և տեղեակ է մօտից խորհրդային Ողիմպոսում անցած-դարձածներին»:

Պէտք է եզրակացնել, հետևաբար, որ Վրացեան-Լուկաշին հանդիպումը տեղի ունեցած է 1932էն ետք: Ճշգրիտ թուականը գիտնալու համար հարկ կ'ըլլայ խորհրդային աղբիւրներէն երևան բերել Լուկաշինի Եւրոպա գործուղման տարին:

Երուանդ Գ. Փամպուքեան (Պէյրոյթ)

ON THE SECRET MEETING OF SIMON VRATSYAN AND SARKIS SRAPIONYAN – LUKASHIN

Ervand G. Pambukian (Beirut)

Key words – Simon Vratsyan, Sargis Srapionyan – Lukashin, literary archive of Hamazgayin, Stalin regime, Martiros Saryan, the government of all Armenians, Wiesbaden.

⁴ Հնարավոր է նաև, որ Զանգի ծածկանունով հրատարկուող Լուկաշինի հետ հանդիպումից հետո է արվել՝ նրա հետ պայմանավորվածության «լույսի ներքո»: Խմբ.:

Օ СЕКРЕТНОЙ ВСТРЕЧЕ СИМОНА ВРАЦЯНА И САРКИСА СРАПИОНИЯНА – ЛУКАШИНА

Երվանդ Գ. Բամբուկյան (Բեյրութ)

Ключевые слова – Симон Врацян, Саргис Срапионян – Лукашин, литературный архив Амазгаина, сталинский режим, Мартирос Сарьян, правительство всея Армении, Висбаден.

Ա. պատարիկ

Երեկոյ էր: Մութը լոյսին դեռ չէր յաղթել:

Հակառակ ամերիկացիների ներկայութեան, Վիսքադէնի կայարանում իրանցում գրեթէ չկար: Խաղաղ էր և այն փողոցը, որով ես անցնում էի պայուսակը ձեռքիս՝ կայարանից դէպի ձախ: Փարիզից յետոյ Վիսքադէնի այս փողոցը զարմանալի մաքուր էր երևում:

Ահա և այն աննշան պանդոկը գոթական անընթեռնելի ցուցանակով, ուր ըստ ժամադրութեան, պիտի սպասէր ինձ Խորհրդ. Հայաստանի վարիչներից ամենալուրջներից մէկը, իմ մօրս մօրաքրոջ որդի Սարգիս Սրապիոնեան-Լուկաշինը:

Սարգիս Թոփտի Գիւղի Սրապիոնեան Լուսեղէնի տղան էր: Լուկաշ էր: Լուսեղէնի ռուսերէն անունը, մեզ մօտ, Լուկաշ աղան Թոփտիում և շրջանում յայտնի էր, իբրև ճարպիկ գործի մարդ, ձիու գողերի հովանաւոր, **կուլակ**⁵: Որդին էլ ժամանգել էր հօր բնաւորութեան որոշ գծերը:

Իմ հայրը և Սարգսի հայրը չէին սիրում իրար. «Ժուլիկ», ասում էր հայրս Սարգսի հօր մասին: Վերջինս էլ հօրս ծաղրական անունով էր կոչում, «պատուելի», «տիրացու», «Ֆիլոզոֆ»...

Այդ, սակայն, արգելք չէր, որ Սարգսիսը և ես լինէինք մտերիմ ընկերներ՝ թէ երեխայութեան շրջանում և թէ վերջը, թեմական դպրոցում, ուր նա ինձանից մի դասարան վեր էր:

Մինչ թեմականից նա գնաց Բագու, գիմնազիստ, ես Գէորգեան ճեմարան: Նա դարձաւ սոցիալ-դեմոկրատ, ես դաշնակցական: Ուսանողութեան տարիներին, Պետերբուրգում, նա սոցիալ-դեմոկրատ էր, ես՝ դաշնակցական: Այլա՝ կենսքում էլ մեր ճամբաները տարբեր եղան քաղաքական գծով, բայց մեր անձնական յարաբերութիւններն երբեք չփչացան: Այժմ մենք հանդիպում էինք, նա իբրև Խորհրդ. Հայաստանի յաղթական քաղաքացիներից մէկը:

Բ. պատարիկ

Ժամանակ է անցել. թերթերը կորել են: Մանրամասնութիւնները չեղաւ գտնել:
.....համբուրուեցինք և մի դժուարանում եմ նախկին

- Սարգիսն էր,

- Փոխուել ես, արտասանեց նա մի բան ասած լինելու համար:

- Դու չէն փոխուել, նայեցի աչքերին:

- Եւ ինչպէս:

Սառոյցը կտորած էր:

Այժմ, հարցրի ես, խօսենք [?] իբրև Սարգիս և Սիմոն, թէ իբրև բոլշևիկ և դաշնակցական:

- Ի հարկէ, իբրև Սարգիս, Սիմոն, այլապէս միտք չունի հանդիպելը:

⁵ Հարուստ գյուղացիների անվանումը, որը ԽՍՀՄ-ում ստացավ բացասական երանգավորում: Բառացի թարգմանությամբ նշանակում է **բռունցք: Խմբ.:**

- Դէ՛, ուրեմն լսիր: Ինչ բերիք դուք ժողովրդի գլխին, ինչե՛ր էք անում Հայաստանի հետ ու Հայաստանի գլխին[?]:

- համար չէ՛, որ խնդրել եմ քեզ գալ այստեղ: Դուք էլ շատ յիմարություններ արիք և շարունակում էք անել: Մենք էլ շատ յիմարություններ արինք և անում են[ք]: Մեր Աթարբէգեան և ձեր Ռուբէն փաշան իրար արժեն: Քուրթ: Խօսենք աւելի կարևոր հարցերի մասին:

- Ինչ հարցերի:

- ինչ անենք, որ անցեալ սխալները չկրկնուեն:

- Ինչ

- Ես քեզանից եմ հարցնում, բայց որ ինչում հասկանանք իր[ար] և գործակցենք, բայց դրա առաջին պայմանն է, որ դուք հաշտուէք ձեր կացութեան հետ և ճանաչէք Հայաստանի ներկայ ռեժիմը: Հասկացէք, որ Դաշնակցութիւնը կատարել-վերջացել է իր օրը [?] իբրև իշխանութիւն. իշխանութիւնը մենք ենք այժմ:

- Յիմար բաներ մի խօսիր: Այո՛, օտար սուլիսների վրայ: Դուք ինչի՛ վրայ էիք նստած:

- Ես զարմանում եմ, որ դու ես այդպէս խօսողը: Անգլիացին կամ ամերիկացին չլինէին, ինչ կ'անէիք դուք: Դու, իմ ճանաչած Սիմոնը, չէն գերադասում, որ Ռուսաստանը լինի մեզ մօտ և ոչ թէ ջղային [?] Անգլիան կամ պատուելի Ամերիկան, մէկ ձեռքը Ատտուածաշունչ, միւս ձեռքը հրացան:

- Ռուսաստանն էլ աւելի լաւ չէ: Ցարին էլ տեսանք, բոլշևիկին էլ տեսնում ենք: Իրար արժեն:

- Էլի յիմարություններ ես ասում: Մի կողմ թող ցարն ու բոլշևիկը: Դրանք չեն Ռուսաստանը: Յիշում ես մեր սեմինարիայի դոնապան խելացի Իվանը. նա է Ռուսաստանը: Հարիւր միլիոն Իվանները ապրում են մեր կողքին: Ինչ էք ընկել Անգլիայի և Ամերիկայի յետևից:

- Ինչո՛ւ էք այ խելացնոր, գիժ հայեր, պատասխանեցի ես Գամառ Քաթիպայի խօսքերով:

- Գամառ Քաթիպան ալ ձեզ նման ռոմանթիկ էր:

-

Գիշերները մարդ էր սկսում, իսկ ցերեկները կարծում էր գրուածքներ և երազում էր Հնդկաստանում արդարութեան տաճարներ [?] կանգնեցնելու մասին:

Գ. պատառիկ

Խօսենք գործնական հարցերի մասին, ասաց Սարգիս: Մեզ համար ահագին նշանակութիւն ունէր օրինակ, շաքարի հարցը: Հայաստանը շաքարի տոկոսով, բարձրորակ ձակնդեղ ունի, բայց գործարան չունէր:

Ստիպուած էինք մեր հումոյթը Վրաստան ուղարկել, և այնտեղ շաքարի վերածել. [չ]էինք համարձակում [սեփական] գործարանի մասին խօսք բանալ Մոսկուայում: Ձեր մամուլի, մանաւանդ, «Դրօշակ»ի սուր քննադատութիւնները զէնք ծառայեցին մեր ձեռքում և մենք ունեցանք շաքարի սեփական գործարան: Վրացիները այդպէս են վարում յաճախ: Տեսէք ինչ են գրում մենշևիկները, ասում են նրանք Մոսկուայում և ստանում ուզածը:

Մեզ համար կենսական պահանջը՝ Երևան-Աղստաֆա երկաթուղին է, որի շինութեան վրացիներն հակառակած էին: Դուք ձեր փաստացի քննադատութեամբ մեզ կարող էք օգնել: Շատ բաներ կան, որոնց մասին ներսը մենք ծպտուն հանել չենք կարող: Դուք դրսից ձեր ազատ և փաստացի քննադատութեամբ պէտք է օգնէք մեզ:

- Զարմանալի մարդիկ էք, առարկեցի ես: Ամէն օր պոռում էք «լուծեցէք Դաշնակցութիւնը», իսկ դու ինչե՛ր ես խօսում:

- Զարմանալի դուք էք, ոչ ես, բարկացաւ Սարգիսը: Մենք այդպէս պէտք է պո-

ռանք, պահանջենք «մահ Դաշնակցութեան», որպէսզի ոտքի վրայ մնանք, դուք էլ պէտք է լսէք մեր աղմուկը, բայց շարունակէք գործել: Պէտք է ըմբռնէք մեր ռեժիմի բնույթը: Մենք ուրիշ կերպ չենք կարող վարուել:

Դուք, դու և Ռուբէնը⁶, Թաւրիզից ուլտիմատում էիք ուղարկել Երևան, կոմունիստական կուսակցութեան, թէ՛ եթէ մի դաշնակցական սպանէք, մենք փոխարէնը երկու նշանաւոր կոմունիստներ կը սպանենք: Ալիոշան (Միասնիկեան) կատողել էր: Ո՞նց թէ ուլտիմատում այդ բանդիտները: Կը ճգմենք, կը փոշիացնենք:

Ես յիշեցրի Թալէաթի, Ջիւանշիրի, Ճենալ փաշայի տեռորները: Ալիոշայի փութը իջաւ:

Եւ այնուհետև, հաւատացնում եմ քեզ, ոչ մի դաշնակցական չի սպանուել կուսակցական պատճառով:

Սարգիսը ճիշտ էր ասում: Փետրուարի 18-ից յետոյ, երբ մենք նահանջում էինք Պարսկաստան, Թաւրիզում երևացին անծանօթ երիտասարդներ, խորհրդաւոր շարժումներ: Մեր հետաքննչութիւնն անվիճելի կերպով հաստատեց, որ դրանք ուղարկուել էին Երևանից որոշ մարդկանց [?] սպանելու համար: Այդ տեռորիստներից մէկը ինձանից տեսակցութիւն էր խնդրել: Հակառակ ընկերների ընդդիմութեան, ես տեսակցութիւն ունեցայ: Ներս մտնելիս երիտասարդն՝ արդէն խուզարկուել էր և վրայից առել էին ատրճանակը: Ալեքսանդրապոլցի մի տղայ էր, անհանդարտ, վառվռուն աչքերով: Թաւրիզ եկել էր, իբր թէ, անձնական գործով:

Հանգամանօրէն ստուգելուց յետոյ, մենք Ռուբէնի հետ, Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի անունով գրութիւն ուղարկեցինք Երևան, Ալ. Միասնիկեանի հասցէով, Սարգիսի ասած բովանդակութեամբ: Նամակի պատճէնն այս է՝.

ՍՎ 142-13

1921 թ. Օգոստոս 10
Թաւրիզ

Հայաստանի Յեղկոմի նախագահ Ա. Միասնիկեանին

Մեզ բոլորին հաստատ յայտնի է, որ Հայաստանի և Ատրբէջանի «չէկա»ների անունով Թաւրիզում մահափորձեր են պատրաստում Հ. Յ. Դաշնակցութեան մի շարք գործիչ՝ անդամների դէմ: Հաղորդելով Ձեզ այն մասին՝ հարկ ենք համարում տեղեկացնել, որ բոլշևիկների կողմից սպանուած իւրաքանչիւր դաշնակցականի կեանքի համար անձնապէս պատասխանատու են Հայաստանի Յեղկոմի անդամները, ինչպէս նաև Հայաստանի Կոմունիստական կուսակցութեան ղեկավար անդամները:

Միաժամանակ մեզ լուրեր են հասնում, որ Հայաստանի զանազան մասերում տեղի են ունենում քաղաքական հալածանքներ այն պատրուակով, որ, «Դաշնակցականները հանգիստ չեն նստում»: Յայտնում ենք Ձեզ, որ քանի չեն կրկնուի յունուար-փետրուարեան խելագարութիւնները, Հ. Յ. Դաշնակցութիւնը ոչ միայն կը մնայ լոյալ, այլև նրա անդամները անկեղծ մասնակցութիւն կ'ունենան երկրի կուլտուր-տնտեսական շինարարութեան: Սակայն եթէ Հայաստանում նորից հաստատուի կացնի իշխանութիւնը, հետևանքները կը լինեն նոյնը, ինչ որ եղան Փետրուարին:

Հ.Յ.Դ. Բիւրոյի լիազօր անդամ
ՌՈՒԲԷՆ
Ս. ՎՐԱՅԵԱՆ

6 Ռուբէն Տէր Մինասեան. Վրացեանի հետ այդ օրերուն (1921 թ.) Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ:

7 Յիշատակուած նամակի պատճէնը չէ տրուած: Ս. Վրացեանի անձնական արխիւէն քաղելով կու տանք նշուած նամակը, որ սպառնագրի բնոյթ ունի և որուն տակ գրուած է. «Այս նամակը ուղարկուեց Երևան Օգոստոս 24ին»:

Այս նամակը ուղարկուեց Երևան Օգոստոս 24ին:

ԱՐԽԻՎ

[Ճշմարիտ էր և Սարգիսի ասածը, թէ այնուհետև ոչ մի դաշնակցական չէր սպանուել. կուսակցական սպանելու [?] պէտք էլ չկար քանի որ գոյություն ունէին սիպիբեան տունդրաները իբրև արքորավայր, որոնք մահից ատելի սարսափելի էին:

Երոպա մեկնելիս, ասաց Սարգիսը, ես նպատակ չունէի քեզ հետ տեսնուելու. Սարեանը տեսնուել էր քեզ հետ Փարիզում և ասում «Միմոնը կատաղի հակաբոլշևիկ է դարձել»: Բայց Բերլինում այնպիսի բաներ լսեցի, որ որոշեցի անպատճառ տեսնուել հետո: Գուցէ **չորտ նէ ստռաշէն, կակ եվօ մոյոյոյոս**⁸:

Ճիշտ է, ես նկարիչ Սարտիրոս Սարեանի հետ տեսնուել էի Փարիզում, մետրոյի՝ եթէ չեմ սխալուում, Concorde կայարանում, ես պատրաստուում էի դուրս գալ, մէկ էլ իմ թևից քաշեց ներս մտնող մի պարոն: Սարեանն էր⁹:

Սպասիր, ուր ես գնում: Ասելիք ունեմ:

Եւ մենք նստանք տարբեր նստարանների վրայ, իբրև անծանօթներ և շարունակեցինք ճամբան մինչև տերմինուս: Դուրս գալով մետրոյից և համոզուելով, որ մեզ հետևող չկար, մենք մտանք ամէնից աղօտ լուսաւորուած մի café, որ գրեթէ ամայի էր:

Սարեանը հանգիստ շունչ քաշեց, կարօտով տեղաւորուեց մօտս, և մինչ սպասեակը ապապրանք էր ընդունել, ուշադրութեամբ գննեց շուրջը՝ ապահով էինք, կարելի էր ազատ խօսել: Եւ մենք խօսեցինք մինչև կէս գիշեր:

Սարեանի պատմածից կարելի էր եզրակացնել.

- Մեզ մօտ այժմ վատ է. ամէն բան վատ է, բայց ինչ կարող ենք անել: Մեր հայրենիքն է, աշխատենք, որ լաւ լինի: Սպասենք և յուսանք:

Ես համաձայն չէի սպասելու: Այդ էր պատճառը, երևի, որ ես, ըստ Սարգիսի, կատաղի հակաբոլշևիկ էի երևացել:

Կատաղութեան հարց չկար: Ես պարզեցի միայն մեր տեսակէտը բոլշևիկեան, այն ժամանակ ստալինեան վարչաձևի մասին: Իմ համոզումով նման մի վարչաձև երկար չէր կարող կանգուն մնալ և եթէ չէր ընկնում, փաստօրէն Սարգիսն էլ այդպէս էր մտածում, միայն չէր համաձայնում, որ պէտք էր ձգել:

Եթէ մտածածը անկեղծօրէն ասէր, այն ժամանակ քիչ տարբերութիւն կը մնար նրա և իմ միջև: Մատերիալիստական փիլիսոփայութիւնը, մարքսիզմը – այլևս ո՞վ էր մտածում այդպիսի բաների մասին: Սարգսի հետ խօսելիս ես զգացի, որ Հայաստանում իրական կոմունիզմ գոյութիւն չունի: Մնացեր էր միայն արտաքին շպարը և վերի [?] իշխանութեան ահը: Ստալին-Բերիա դաժան իշխանութիւնը եթէ գոյութիւն չունենար, համայնավար կարգը վաղուց խորտակուած կը լինէր:

Ինչ ես մտածում սովետական, կոմունիստական վարչաձևի ապագայի մասին, հարցրի Սարգիսին.

- Նա աչքի տակով նայեց վրաս, մի քիչ լռեց և ասաց.

- Նախ՝ մենք պայմանաւորուել էինք այդպիսի բաների մասին չխօսել: Երկրորդ՝ միթէ՞ պատասխանի կարիք կայ: Դեռ հազար ու մէկ օրերով սովետական կամ կոմունիստական ռեժիմը յաւիտենական է, բայց քեզ կարող եմ ասել հետևեալը.

- Սովետական ռեժիմը կարող է մնալ շատ երկար, բայց կոմունիզմի ժամի չի հասել մեր երկրի համար: Ժողովուրդը դեռ տզէտ է և իր արածի գիտակցութիւնը չունի: Քանդելու մէջ վարպետ է, բայց նոր իրաւակարգ անկարող է հաստատել. շատ-շատ բիւրոկրատիկ դրութիւն դուրս կը գայ:

- Ի վերջոյ, ինչ է միտ բանին մեր այս գիշերուայ հանդիպման, հարցրի ես

Թ. (ԺԵ) Գաբի, թիվ 2 (58), ամբիլ-հունիս, 2017

ՎԿՄ համահայկական հանդես

8 Բնագրին մէջ ռուսատառ՝ սատանան այդպէս սարսափելի չէ, ինչպէս կը աղերսեն գայն:
9 Համաձայն տիկ. Ռուզան Սարյանի մեզ տրամադրած տեղեկատվոյան՝ Սարտիրոս Սարյանը Ֆրանսիայում է եղել 1926 թ. օգոստոսից մինչև 1928 թ. հունվարի վերջը: Խմբ.:

Սարգիսին, երբ արդէն ամէն բան ասուած էր, այդքան[?] յոգնած էինք, իսկ գիշերն էլ վերջանալու վրայ էր:

Միտ բանին, ծիծաղեց Սարգիսը, մեր հսկիչ Շահագիզին յիշեցի: Նա էլ գործածում էր այդ խօսքը – միտ բանին կարծում եմ, որ մենք իրար հասկացանք: Կը գայ ժամանակ, երբ ընդհանուր հասկացողութիւն տեղի կ'ունենայ, երբ ես ու դու չենք լինի, բայց կոմունիզմն ու Դաշնակցութիւնը կը լինեն:

Մեր խօսակցութիւնն այնքան էլ խաղ[աղ] ու բարեկամական չէր ընթանում: Երբեմն խայթող խօսքեր էինք ուղղում իր[ար]: Մերթ սուր վէճի էինք բռնում, փոխադարձ մեղադրանքով և աղմուկով լեցնում էինք սենեակը:

Արշալոյսը մօտենում էր, երբ Սարգիսը ձևակերպեց մեր խօսակցութիւնից բխող եզրակացութիւնը.

– Ուրեմն մենք հասկացանք իրար: Մենք Հայաստանի իշխանութիւն ենք...

– Ամենայն հայոց կառավարութիւն, ընդմիջեցի ես նրա խօսքը:

– **Զիպուլսա!**¹⁰ Մենք Հայաստանի կառավարութիւն ենք, դուք ընդդիմադիր կուսակցութիւն: Դուք հանդուրժում էք մեզ. մենք հանդուրժում ենք ձեզ:

Մի խօսքով կարող ենք անխնայ հայհոյել միմեանց: **Զիպուլսա!** Մեր նպատակն է պահել և զօրացնել Հայաստանը, դուք պէտք է օգնէք մեզ դրսից:

Լռելեայն իրար հայհոյելով՝ մենք պէտք է համագործակցենք: Եթէ Դաշնակցութիւնը գոյութիւն չունենար, անհրաժեշտ էր ստեղծել նման [?] մի կազմակերպութիւն որ մենք դեռ «ամբոխները խելագարուած» ենք և եթէ անզգոյշ վարուէք մեզ հետ, դուք էլ, մենք էլ շատ կը տուժենք:

Հիմա՝ ես հիւսիս, դուն հարաւ: Մենք իրար չենք տեսել, չենք խօսել իրար հետ. ծանօթ էլ չենք:

Լուծը ջրի ճամբան կը կոտրուի: Մնաս բարով:

Մենք յուզումով բաժանուեցինք իրարից: Լուսաբացը մօտ էր, բայց Վիսրադէնի փողոցները դեռ ամայի էին:

¹⁰ Բնագրին մէջ ռուսատառ՝ դատարկ խօսք!: